

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀԲԱԾՁԲ-7/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

17-ը մարտի 2018թ.

«Հ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էրիզ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասլանյանի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Լարս» ՍՊԸ-ի հետ), ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 26.01.2018թ. կնքված № ՀԲԱԾՁԲ-7/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 515 912 665 (հինգ հարյուր տասնհինգ միլիոն ինը հարյուր տասներկու հազար վեց հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, 15 րանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրոյթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 4 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 3 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ թիկունքի վարչությունը:


4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
«Հ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի փոխնախագահի վարչություն»
Հ/Հ 90001140079
Հ/ՀՀ 00052315
ՀՀ պաշտպանության նյութատեխնիկական
LSU դեպարտամենտի վարչություն

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Նաիրի Չարյան 24
«Հայրիզնեսթանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150052181818
Հ/ՀՀ 00089186



ԿԱՐԱՊԵՏԱՆ

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Սննդի պատրաստման ծառայություն/ ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/

1	Սննդի պատրաստման ծառայություն/ ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/	մարդ/օր	Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա՝ ըստ հայտերի	2 296.5	Ծառայության մատուցումը կիրականացվի 2018թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում
Առավելագույն գումարը		389 968 665 (երեք հարյուր ութսունհինգ միլիոն ինը հարյուր վաթսունույթ հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ			

Ծանոթություն՝

- * Մատուցվող ծառայության վայրը՝ ք.Երևան, Նոր Նորքի 6-րդ զանգված, Շոպրոնի 77 հասցեում:
- ** Մեկ օրվա գնի 30%-ը կազմում է նախաճաշ, 45%-ը ճաշ, 25%-ը ընթրիք:

2. Սննդի պատրաստման ծառայություն /ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանում հանգստացող անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/

2	Սննդի պատրաստման ծառայություն /ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանում հանգստացող	մարդ/օր	Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-	4 498	Ծառայության մատուցումը կիրականացվի 2018թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում
---	---	---------	--	-------	--

	անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/		առողջարանի հրամանատարի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա (ըստ հայտերի)		
	Առավելագույն գումարը	125 944 000	(մեկ հարյուր քսանհինգ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ		

Ծանոթություն՝

- **Մատուցվող ծառայության վայրը՝** ք. Դիլիջան, Կամոյի փողոց, Լեոնային Հայաստան
առողջարան հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԿԿ




Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Նաիրի Զարյան 24
«Հայթիզնեսքանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500521818118
ՀՎՀՀ 00089186

տնօրեն



Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Արարչի ֆինանսավորման անվանատրոհ անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսերի, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ										Պեկտեմբեր
		CPV կոդը	նախորդ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	
1	Սննդի պատրաստման ծառայություն	55321100/320	74199915	178690665	178690665	178690665	284329665	284329665	284329665	389968665	389968665	389968665
2	Սննդի պատրաստման ծառայություն	55321100/321	7696078	34211788	34211788	34211788	91682734	91682734	91682734	125944000	125944000	125944000

* Վճարման ենթակա գումարը ներկայացված է անողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
 ք. Երևան, Բազմանոցի 5
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՀ 90001144079
 ՀՀՀՀ 00867415
 ՀՀ պաշտպանության նախարարության
 ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԳԿ 1


Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ԿԱՏԱՐՈՂ

«Էրիզ» ՍՊԸ
 ք. Երևան, Նաիրի Զարյան 24
 «Հայրիզներսանկ» ՓԲԸ
 Հ/Հ 11500521818118
 ՀՎՀՀ 00089186

տնօրեն



Ա. ԱՍԼԱՅԱՆ

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էրիզ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասլանյանի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Լարս» ՍՊԸ-ի հետ), ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է՝ 591 801 040 (հինգ հարյուր ինսունմեկ միլիոն ութ հարյուր մեկ հազար քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂՁԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՍՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Քանի որ Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով «Լարս» ՍՊԸ-ի հետ, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈւ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎՎԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բազրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարություն
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Կ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի նկատի ՊՆԿ



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Նաիրի Զարյան 24
«Հայրիզնեսքանկ» ՓԲԸ
Հ/Կ 11500521818118
ՀՎՀՀ 00089186



տնօրեն

Ա. ԱՄԼԱՅԱՆ

ԷՊ 00366 0089

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ՀՀ ՊԵՎՍԱՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՋՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Մենդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ճաշարաններում և դաշտային պայմաններում անձնակազմին պետք է ապահովի ոչ պակաս օրական երեքանգամյա տաք սննդով:

2. Անձնակազմի սննդի մատուցումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության 03.12.2015թ. N1456 որոշմամբ հաստատված N1 հիմնական ապահովման և Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտներին, բացի N1 չափաքանակից լրացուցիչ նախատեսված չափաքանակներից սննդամթերքի շրջանակներից ոչ պակաս և սննդամթերքի փոխարինման շրջանակներում:

3. Օրական անձնակազմին մատուցվող ճաշատեսակները, աղցանները և խավարտները պետք է լինի՝ նախաճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարտ, մշտապես պահպանելով բազմազանությունը,

ճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս ապուր,
- երեք տեսակից ոչ պակաս խավարտ,
- երկու տեսակից ոչ պակաս աղցան,
- երկու տեսակից ոչ պակաս մսեղիք,

ընթրիքից՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարտ, մշտապես պահպանելով բազմազանությունը,
- մեկ տեսակից ոչ պակաս ծով, բացառությամբ սկումբրիա, սարդիլենա, կարաս, հաստաճակատ տեսակներից:

Չափաքանակով նախատեսված մնացած սննդատեսակների մատուցումը պետք է իրականացվի շաբաթական սննդի բաշխման ցուցակով նախատեսված քանակների և օրվա կարգացուցակով նախատեսված սննդի մատուցման ժամերին:

4. Շաբաթվա յուրաքանչյուր ուրբաթ օրը ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կազմի հաջորդ շաբաթվա 7 օրերի համար սննդի բաշխման ձևաթերթիկը, այն համաձայնեցնի Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի բժշկական և պարենային ծառայությունների պետերի, նյութաապահովման գծով տեղակալի հետ և ներկայացնում է Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի հաստատմանը: Բաշխման ձևաթերթիկում յուրաքանչյուր փոփոխություն պետք է կատարվի համալսարանի պետի թույլտվությամբ:

5. Դաշտային պայմաններում սննդի պատրաստման և մատուցման ժամանակ մտեղենը և ձկնեղենը կարող է փոխարինվել մսի պահածոյով, աղցանը՝ ձավարեղենով կամ այլ քանջարեղենով, այն օգտագործելով ճաշատեսակների մեջ, փոխարինումը իրականացնել ՀՀ կառավարության 03.12.2015թ. N1456 որոշմամբ հաստատված փոխարինման նորմաների:

6. Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա:

7. Սննդի պատրաստման և մատուցման ծառայության պայմանագրի կնքումից անմիջապես հետո զորամասում առկա ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները, տեխնիկական միջոցները, ճաշարանախոհանոցային սպասքը և գույքը մինչև պայմանագրի գործողության ավարտը անհատուց տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը, իսկ դրա դիմաց ծառայություն մատուցողը պայմանագրի գործողության ժամկետում հույս-սեպտեմբեր ամիսներին լրացուցիչ հատկացնում է շաբաթական երեք օր միրգ (ձմերուկ, սեխ, խաղող, դեղձ)՝ յուրաքանչյուր օր մեկ զինծառայողի հաշվարկով 100 գրամից, իսկ հոկտեմբեր-մարտ ամիսներին թարմ կամ չորացրած մրգերից պատրաստված կոմպոտ՝ մեկ մարդու հաշվարկով օրական 200 գրամ:

8. Ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումների վերանորոգումը, սպասարկումը, ինչպես նաև ճաշարանախոհանոցային սպասքի և գույքի թարմացումը իրականացվում է ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:

9. Պայմանագրի գործողության ավարտից հետո ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները, ճաշարանախոհանոցային սպասքը և գույքը պատվիրատույին հանձնվում է սարքին վիճակում:

10. Ճաշարանները իր բոլոր արտադրամասերով, սննդամթերքի և քանջարեղենի պահեստները ծառայություն մատուցող կազմակերպությանը տրամադրվում է կոմսետիկ վերանորոգված վիճակում սննդամթերքի պահպանումը և սննդի կազմակերպումն իրականացնելու համար: Նշված շինությունների շահագործման ընթացքում կոմսետիկ և ընթացիկ վերանորոգումը, անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի ծառայություն մատուցողի կողմից:

11. Դաշտային պայմաններում սննդի պատրաստման և մատուցման համար նախատեսված տեխնիկական միջոցները տրամադրվում է Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կողմից, իսկ շահագործումը և դրա համար անհրաժեշտ վառելիքի ծախսը իրականացվում է սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող կազմակերպության կողմից:

12. Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանում սննդի պատրաստման և մատուցման ծառայության պայմանագրի կնքումից և գործողության դնելուց անմիջապես հետո, ծախսված էլեկտրաէներգիայի, խմելու ջրի, գազի և աղբահանության

ծախսերը կատարում է տվյալ կազմակերպությունը առանձնացված հաշվիչների միջոցով՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության կողմից սահմանված գործող չափաքանակներին: Չափիչ սարքերը պետք է տեղադրվի ծառայություն իրականացնող կազմակերպության կողմից իր միջոցներով:

13. Ճաշասեղաններն ու այթոռները տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը, դրանց ընթացիկ վերանորոգումը պետք է իրականացնելով կազմակերպության կողմից, իսկ նորով փոխարինումը՝ պատվիրատուի կողմից:

14. Ճաշարանի, արտադրամասերի, սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակի պատասխանատվությունը կրում է ծառայություն իրականացնող կազմակերպությունը: Ճաշարաններում սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի պատրաստումը, փոխադրումը և իրացումը կազմակերպել համաձայն ՀՀ Կանոնադրության սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջների (ՍԿ և ՀՆ 2-III-4,2-01-2003):

15. Սննդի պատրաստման և մատուցման ժամանակ ծառայություն իրականացնող կազմակերպությունը ապահովում է պատրաստման տեխնոլոգիայի գործընթացի, սննդամթերքի որակի, ռեժիմի, ընդունման, բաղադրատոմսերի պահպանման կանոնները և պատրաստի ճաշատեսակների ելքի նորմաները, ինչպես նաև մսի և ձկան չափաբաժինների համապատասխանությունը ՀՀ ՊՆ անձնակազմի սննդի կազմակերպման վերաբերյալ ՀՀ ՊՆ նորմատիվային և դեկլարատիվ փաստաթղթերով սահմանված նորմաներին կամ օրենքով սահմանված այլ նորմատիվային փաստաթղթերին:

16. Սննդի մատուցումը պետք է իրականացվի օրվա կարգացուցակով սահմանված սննդի ընդունման ժամերին:

17. Հինծառայողներին հատկացվող պատրաստի ճաշատեսակների բաժանումը ծառայություն իրականացնող կազմակերպությունը իրականացնում է ճաշարահում, մթերքի բաշխման ցուցակում նշված պատրաստի չափաբաժինների ելքին համապատասխան քանակությամբ:

